Կարգապահական գործ թիվ ԿԳ-25055

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ԼԵՎՈՆ ՍՈԽԱԿԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԵՎ ԹԱԴԵՎՈՍ ՎԱՐԴԳԵՍԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահե Աստվածատրյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի և Կարեն Խալաթյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

քննության առնելով փաստաբան Լևոն Սոխակի Բաղդասարյանի (արտոնագիր՝ թիվ 88) և փաստաբան Թադևոս Վարդգեսի Ալեքսանյանի (արտոնագիր՝ թիվ 87) **(այսուհետև միասին նաև՝ Փաստաբաններ կամ Պատասխանողներ)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Հրայր Անտոնյանը, Ջուլիետա Անտոնյանը և Նաիրա Նավասարդյանը **(այսուհետև՝ Դիմողներ),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև՝ նաև Պալատ),** հայտնել են, որ Հրայր Անտոնյանի և «Փաստաբանական գրասենյակ Լեվ Գրուպ» ՍՊԸ-ի **(այսուհետև՝ Փաստաբանական գրասենյակ)**՝ ի դեմս տնօրեն փաստաբան Լևոն Բաղդասարյանի, 11.04.2022 թվականին կնքել են թիվ 2223/ԼԳ պայմանագիր **(այսուհետև՝ Պայմանագիր),** որի համաձայն՝ Փաստաբանական գրասենյակը՝ որպես կատարող, հանձն է առել Դիմողների պաշտպանությունը թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով՝ տրամադրել խորհրդատվություն և իրականացնել դատական պաշտպանություն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, ինչի կապակցությամբ Դիմողները վճարել են պայմանագրի գինն ամբողջությամբ:

Դիմողները նշել են, որ իրենց շահերի պաշտպանությունը ստանձնել են

Թիվ ԿԳ-25055-3-Ա
07.05.2025թ.

փաստաբաններ Լևոն Բաղդասարյանը և Թադևոս Ալեքսանյանը:

Դիմողները հայտնել են, որ 20.11.2024 թվականին ստացել են Փաստաբանական գրասենյակի տնօրեն Լևոն Բաղդասարյանի գրությունը՝ Պայմանագրի գինը փոփոխելու կամ համաձայնության չգալու դեպքում այն լուծելու առաջարկով, ինչը հիմնավորվում էր այն հանգամանքով, որ թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործի քննության ընթացքում փոխվել է 3 դատավոր, հետևաբար Պայմանագրով նախատեսված պարտավորությունը կատարվում է արդեն երրորդ անգամ:

Դիմողները հավելել են, որ առարկել են առաջարկի կապակցությամբ՝ չեն ցանկացել լուծել պայմանագիրը, քանի որ փաստաբանական գրասենյակը ստանձնել է իրենց շահերի պաշտպանությունը առաջին ատյանի դատարանում, ուր գործի քննությունը դեռ չի ավարտվել, իսկ Պայմանագրի գինը վճարված է ամբողջությամբ:

Դիմողները նշել են, որ 25.11.2024 թվականի հերթական դատական նիստին փաստաբանները չեն ներկայացել, ինչի կապակցությամբ Դիմողները 29.11.2024 թվականին ուղարկել են վերջիններիս գրություն՝ պարզաբանում պահանջելով չներկայանալու պատճառների վերաբերյալ:

Նշվածին ի պատասխան Փաստաբանական գրասենյակը տրամադրել է Դատարանին հասցեագրված 03.12.2024 թվականի գրության պատճենը, որի համաձայն փաստաբաններն այլևս չեն իրականացնում Դիմողների շահերի պաշտպանությունը:

Դիմողները հեռախոսազանգով պահանջել են Փաստաբանական գրասենյակի տնօրեն Լևոն Բաղդասարյանից վերադարձնել գումարի այն մասը, որի դիմաց ծառայություն չի մատուցվել, սակայն վերջինս հրաժարվել է կատարել այդ պահանջը:

Դիմողները ներկայացրել են Պայմանագրի, վճարման անդորրագրերի, Փաստաբանական գրասենյակի 18.11.2024 թվականի գրության, Դիմողների 22.11.2024 թվականի առարկության, այն ուղարկելու փաստը հավաստող անդորրագրի, 29.11.2024 թվականի գրության, այն ուղարկելու փաստը հավաստող անդորրագրի, Դատարանին հասցեագրված Փաստաբանական գրասենյակի 03.12.2024 թվականի գրության, 25.11.2024 թվականի դատական նիստի արձանագրության պատճենները:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 25.02.2025 թվականին Դիմողներին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողները որևէ դիրքորոշում չեն ներկայացրել:

2. <u>Պատասխանողների համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբաններ Լևոն Բաղդասարյանին և Թադևոս Ալեքսանյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Հրայր Անտոնյանի, Ջուլիետա Անտոնյանի և Նաիրա Նավասարդյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբան Լևոն Բաղդասարյանը 10.01.2025 թվականի բացատրությամբ հայտնել է, որ Փաստաբանական գրասենյակը Պայմանագրով ստանձնել է Դիմողների շահերի

պաշտպանությունը թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով, որը այդ պահին գտնվում էր դատաքննության փուլում, ինչից ելնելով Պայմանագրի գինը հաշվարկվել է յուրաքանչյուր վստահորդի համար 1.000.000 ՀՀ դրամ:

Փաստաբանը հավելել է, որ դատական նիստերին մասնակցությունը պաշտպանական կողմն ապահովել է պատշաճ կարգով և որակով:

Փաստաբանը հայտնել է, որ 06.06.2023 թվականին գործը մակագրվել է այլ դատավորի, ինչից հետո դատաքննությունն օրենքի ուժով սկսվել է սկզբից և այդ փուլում ևս իրականացվել է Դիմողների շահերի պատշաճ պաշտպանություն:

Փաստաբանը նշել է, որ 18.04.2024 թվականին գործը մակագրվել է մեկ այլ դատավորի, ինչից հետո ապահովվել է պատշաճ մասնակցություն, իսկ այնուհետև մինչև 25.11.2024 թվականին նշանակված դատական նիստը՝ 18.11.2024 թվականին Փաստաբանական գրասենյակը տեղեկացրել էր Դիմողներին Պայմանագրի փոփոխության կամ Պայմանագրի կատարումից հրաժարվելու մասին, որի իրավունքը ամրագրված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ և 788-րդ հոդվածներով:

Փաստաբանը, հղում կատարելով Փաստաբանական գրասենյակի ծախսերին և ծանրաբեռնվածությանը, հավելել է, որ Պայմանագրային պարտավորությունները գրասենյակը կատարել է կրկնակի անգամ, երրորդ անգամ նույն պարտավորությունների կատարումն առանց լրացուցիչ վճարման անհնարին էր, ինչի պատճառով հրաժարվել է Պայմանագրի կատարումից, որի վերաբերյալ ևս լրացուցիչ տեղեկացրել է Դիմողներին:

Փաստաբանը բացատրությանը կից ներկայացրել է «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից քաղվածքը թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործի վերաբերյալ, ինչպես նաև Դիմողներին հասցեագրված 10.12.2024 թվականի գրության և այն ուղարկելու փաստը հավաստող փոստային անդորրագրի պատճենները:

Փաստաբան Թադևոս Ալեքսանյանը բացատրություն չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 25.02.2025 թվականին Փաստաբաններին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանները 11.03.2025 թվականի համատեղ բացատրությամբ ըստ էության պնդել են նախկինում ներկայացված փաստաբան Լևոն Բաղդասարյանի դիրքորոշումը, հավելելով, որ Դիմողները փաստացի չունեն բողոք մինչև 25.11.2024 թվականն իրականացված պաշտպանական գործողությունների մասով, քանի որ Փաստաբանների կողմից իրականացված փաստաբանական ծառայություններն իրականացվել են պատշաճ և գերազանցել են պայմանագրի ծավալը, քանի որ պաշտպաններն իրականացրել են իրավաբանական, փաստաբանական ծառայություններ այդ թվում պայմանագրի առարկայի մեջ չմտնող ծավալի մասով:

Փաստաբանները վկայակոչելով Կանոնագրքի 3.3.2-րդ մասը նշել են, որ փաստաբանին տրված է հստակ հնարավորություն իր կողմից որոշված հոնորարի չափը փոփոխելու կապակցությամբ, եթե պայմանագրով ստանձնած պարտավորությունների

ծավալը փոփոխվել է, վստահորդը նոր կամ լրացուցիչ առաջադրանք է ներկայացրել, այլ կերպ ասած՝ բոլոր այն դեպքերում, երբ փաստաբանական ծառայությունների ծավալը մեծանում է, փաստաբանն իրավունքի ունի հոնորարի չափը փոփոխել:

Փաստաբանների պնդմամբ, Դիմողները պայմանագիրը կնքելիս ի սկզբանե տեղյակ են եղել, որ պայմանագրի գումարը որոշվել է յուրաքանչյուրի մասով 1.000.000 ՀՀ դրամ, քանի որ վերջիններիս քրեական գործը պաշտպանների կողմից ծառայությունները ստանձնելիս գտնվել է դատաքննության փուլում արդեն իսկ հետազոտվել էին գործում եղած ապացույցները, այսինքն գործը թևակոխել էր վկաների հարցաքննության փուլ, որին միայն պետք է մասնակցեին փաստաբանները, սակայն փաստացի սույն քրեական գործով դատական լսումները ոչ միայն չեն ավարտվել, այլ քրեական գործը մի քանի անգամ մակագրվել է այլ դատավորի, որի փաստի ուժով պաշտպանները ծառայություն են մատուցել կրկնակի անգամ 06.06.2023 թվականին սույն քրեական գործը մակագրվել է այլ նախագահող դատավորի դատավոր Ա.Մարտիրոսյանի: Գործի քննությունը սկսվել է օրենքի ուժով սկզբից:

Փաստաբանների պնդմամբ, նրանք գերակա համարելով տվյալ պահին պաշտպանյալների շահը, քանի որ այդ ժամանակ ընկերության ծախսերը հնարավոր է եղել ծածկել այլ պայմանագրերից առաջացած գումարներով կրկնակի անգամ ներկայացրել ենք մեղադրյալների շահերը այլ դատարանում: Դատական քննությունը տևել է 10 ամիս, տեղի են ունեցել կանոնավոր կերպով դատական նիստեր, կատարվել են պաշտպանների կողմից մի շարք միջնորդություններ: Նախագահող դատավորի այլ դատարան տեղափոխվելու հիմքով 18.04.2024 թվականին գործը մակագրվել է այլ դատավորի: Սույն գործով առաջին դատական նիստում ապահովվել է պաշտպանի ներկայությունը, որից հետո մինչև սույն գործով հաջորդ դատական նիստի օրը, որը տեղի է ունեցել 25.11.2024 թվականին, 18.11.2024 թվականին արդեն գրավոր տեղեկացվել են Դիմողները Պայմանագրի գնի փոփոխության կամ Պայմանագրի կատարումից հրաժարվելու մասին, 22.11.2024 թվականին վերջիններիս կողմից ստացվել է գրություն, որով Դիմողները հայտնել են, որ համաձայն չեն Պայմանագրի գնի փոփոխմանը այն դեպքում, երբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ և 788-րդ հոդվածները բացառիկ իրավունք են վերապահում ընկերությանը հրաժարվելու հետագա ծառայությունները մատուցելուց, որով, որ ընկերությունը ղեկավարվել է հետևաբար պաշտպանները բացատրել են վստահորդներին հոնորարի չափի փոփոխման իրավական հիմքերի մասին, սակայն վերջիններս չեն համաձայնվել հաշվի չառնելով պաշտպանների կողմից իրականացված ծառայությունների մատուցման որակը և պատշաճությունը, ինչով պայմանավորված էլ նշված հոդվածներով տրված բացառիկ իրավունքով Փաստաբանական գրասենյակը հրաժարվել է հետագա ծառայությունները մատուցելուց:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 17.01.2025թ. թիվ 60-Ա/ԿԳ-25055 որոշմամբ **փաստաբան Լևոն Սոխակի Բաղդասարյանի** նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև նաև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հունվարի 19-ի

թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.7.2, 3.5.5, 3.8.2, 3.8.3 և 3.8.4 (1) ենթակետերի խախտման հատկանիշներով, իսկ **փաստաբան Թադևոս Վարդգեսի Ալեքսանյանի** նկատմամբ՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.8.3 ենթակետերի խախտման հատկանիշներով:

22.01.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետև նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 21.03.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-9-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 07.05.2025թ. ժամը 20:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանները ստանձնել են Դիմողների իրավունքների ու շահերի պաշտպանությունը թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով՝ պարտավորվելով տրամադրել խորհրդատվություն և իրականացնել դատական պաշտպանություն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, ինչի կապակցությամբ Դիմողները վճարել են Պայմանագրի գինն ամբողջությամբ: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողների և Փաստաբանների բացատրություններով, վերջիններիս միջև 11.04.2022 թվականին կնքված թիվ 2223/ԼԳ Պայմանագրով, ինչպես նաև 18.05.2022 և 21.03.2023 թվականների անդորրագրերով:*

2. Պայմանագիրը կնքելուց հետո թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով 3 անգամ տեղի է ունեցել դատավորի փոփոխություն, ինչի արդյունքում գործի քննությունը դատական վարույթն սկսվել է նորից: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողների և Փաստաբանների բացատրություններով, ինչպես նաև թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

3. Թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով երրորդ անգամ դատավորի փոփոխությունից՝ 18.04.2024 թվականից հետո մինչև 25.11.2024 թվականի նշանակված

դատական նիստը, կայացել են թվով 3 դատական նիստեր համապատասխանաբար՝ 27.05.2024, 28.06.2024, 13.09.2024 թվականներին: ***Նշված փաստը հաստատվում է*** *թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

4. Փաստաբան Լևոն Բաղդասարյանը՝ որպես Փաստաբանական գրասենյակի տնօրեն, 18.11.2024 թվականին Դիմող՝ Հրայր Անտոնյանին ներկայացրել է գրություն՝ առաջարկելով փոփոխել Պայմանագրի գինը՝ ավելացնելով այն, կամ լուծել պայմանագիրը, այն հիմնավորմամբ, որ Փաստաբաններն արդեն երրորդ անգամ կատարում են Պայմանագրով ստանձնած նույն պարտավորությունը:

Նշվածին ի պատասխան Դիմողները 22.11.2024 թվականի գրությամբ առարկել են Պայմանագրի փոփոխության և լուծման դեմ՝ պահանջելով ապահովել դրա կատարումը, սակայն Փաստաբանները չեն ներկայացել գործով 25.11.2024 թվականին նշանակված հերթական դատական նիստին:

Նշված փաստերը հաստատվում են *փաստաբան Լևոն Բաղդասարյանի՝ որպես Փաստաբանական գրասենյակի տնօրենի 18.11.2024 թվականի գրությամբ և այն ուղարկելու փաստը հավաստող թիվ LO125354378AM փոստային անդորրագրով, ինչպես նաև Դիմողների 22.11.2024 թվականի գրությամբ և այն ուղարկելու փաստը հավաստող թիվ LO125422677AM փոստային անդորրագրով:*

5. Փաստաբանները չեն մասնակցել թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով 25.11.2024 թվականին նշանակված հերթական դատական նիստին: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողների ու Փաստաբանների բացատրություններով, թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով 25.11.2024 թվականի դատական նիստի արձանագրությամբ:*

6. Դիմողների 29.11.2024 թվականին Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանին ներկայացրել են գրությամբ՝ պահանջելով պարզաբանում թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով 25.11.2024 թվականին նշանակված դատական նիստին Փաստաբանների չներկայանալու պատճառների վերաբերյալ:

Նշվածին ի պատասխան Փաստաբանական գրասենյակը տրամադրել է Դատարանին հասցեագրված 03.12.2024 թվականի գրության պատճենը, որի համաձայն Փաստաբաններն այլևս չեն իրականացնում Դիմողների շահերի պաշտպանությունը:

Նշված փաստը հաստատվում է *Դիմողների ու Փաստաբանների բացատրություններով, Դիմողների 29.11.2024 թվականի գրությամբ, այն ուղարկելու փաստը հավաստող թիվ LO125540528AM փոստային անդորրագրով, Փաստաբանների 03.12.2024 թվականի գրությամբ, ինչպես նաև Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանի 10.12.2024 թվականի գրության և այն ուղարկելու փաստը հավաստող թիվ LO125722015AM փոստային անդորրագրով:*

7. Դիմողների և Փաստաբանների միջև կնքված Պայմանգիրը լուծվել է 03.12.2024 թվականին, իսկ Փաստաբանները ծառայությունների մատուցումը փաստացի դադարեցրել են 25.11.2024 թվականից : ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողների և Փաստաբանների բացատրություններով, Դիմողների 29.11.2024 թվականի գրությամբ, ինչպես նաև Փաստաբանների 03.12.2024 թվականի և 10.12.2024 թվականի գրություններով:*

8. Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանը 10.12.2024 թվականի գրությամբ Պայմանագիրը փաստացի լուծելուց հետո, Դիմողներին ներկայացրել է Պայմանագրի հետագա կատարումից հրաժարվելու պատճառները: ***Նշված փաստը հաստատվում է*** *Դիմողների և Փաստաբանների բացատրություններով, ինչպես նաև Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանը 10.12.2024 թվականի գրությամբ:*

9. Պայմանագիրը լուծելիս Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանը Դիմողներին որևէ գումար չի վերադարձրել: ***Նշված փաստը հաստատվում է*** *կողմերի բացատրությամբ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքների համաձայն՝

Լևոն Սոխակի Բաղդասարյանը փաստաբան է հանդիսանում 22.08.2001 թվականից, և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ, իսկ

Թադևոս Վարդգեսի Ալեքսանյանը փաստաբան է հանդիսանում 03.08.2001 թվականից, և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Լևոն Սոխակի Բաղդասարյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.8.2, 3.8.3 և 3.8.4 (1) ենթակետերի խախտման համար, իսկ փաստաբան Թադևոս Վարդգեսի Ալեքսանյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ՝

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ*

անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Դիմողներն, ըստ էության, **փաստաբան Լևոն Բաղդասարյանին վերագրում են** *բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, իրավական օգնություն ցույց տալու*

պայմանագրի հետագա կատարումից անհիմն հրաժարվելու, գործն այնպիսի ձևով և հանգամանքներում թողնելու, որի հետևանքով վստահորդները հայտնվել են անելանելի դրության մեջ և ժամանակին չեն ստացել իրավական օգնություն, պայմանագիրը լուծելիս պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի չի կատարվել աշխատանք, վստահորդին չվերադարձնելու **վարքագիծը**, **իսկ փաստաբան Թադևոս Ալեքսանյանին**՝ *բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու և գործն այնպիսի ձևով և հանգամանքներում թողնելու, որի հետևանքով վստահորդները հայտնվել են անելանելի դրության մեջ և ժամանակին չեն ստացել այլ իրավական օգնություն* **վարքագիծը**:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցերին.

- ***արդյո՞ք Փաստաբանները բարեխիղճ իրավական օգնություն են ցուցաբերել Դիմողներին,***
- ***արդյո՞ք Փաստաբանները ձեռնարկել են ողջամիտ ջանքեր իրենց վստահորդների հանձնարարությունն արագ և արդյունավետ կատարելու համար,***
- ***արդյո՞ք առկա էին Կանոնագրքի 3.8.2-րդ կետով սահմանված հիմքերը Դիմողների և Փաստաբանական գրասենյակի՝ ի դեմս տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանի միջև կնքված Պայմանագիրը (միակողմանի Փաստաբանական գրասենյակի կողմից) լուծելու համար,***
- ***արդյո՞ք Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանը բացատրել է Դիմողին իրավական օգնություն ցույց տալու պայմանագրից հրաժարվելու պատճառները.***
- ***արդյո՞ք Փաստաբանները թողել են գործը այնպիսի ձևով և այնպիսի հանգամանքներում, որի արդյունքում Դիմողները հայտնվել են անելանելի դրության մեջ և ժամանակին չեն ստացել այլ իրավական օգնություն,***
- ***արդյո՞ք Պայմանագիրը լուծելիս Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանը պարտավոր էր Դիմողներին վերադարձրել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել:***

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողների և Փաստաբանների կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ 11.04.2022 թվականին կնքված թիվ 2223/ԼԳ Պայմանագրով Փաստաբանական գրասենյակը՝ որպես կատարող, ստանձնել է Դիմողների շահերի պաշտպանությունը թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով, պարտավորվելով տրամադրել խորհրդատվություն և իրականացնել դատական պաշտպանություն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, ինչի կապակցությամբ Դիմողները վճարել են պայմանագրի գինն ամբողջությամբ: Փաստաբանական գրասենյակի փաստաբաններ Լևոն Բաղդասարյանի և Թադևոս Ալեքսանյանի կողմից Դիմողների իրավունքների ու շահերի ներկայացման ընթացքում թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով 3 անգամ տեղի է ունեցել դատավորի փոփոխություն, ինչի արդյունքում գործի քննությունը դատական վարույթն սկսվել է նորից: Ընդ որում թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով երրորդ անգամ դատավորի փոփոխությունից՝ 18.04.2024 թվականից հետո մինչև 25.11.2024 թվականի նշանակված

դատական նիստը, կայացել են թվով 3 դատական նիստեր համապատասխանաբար՝ 27.05.2024, 28.06.2024, 13.09.2024 թվականներին:

Փաստաբան Լևոն Բաղդասարյանը՝ որպես Փաստաբանական գրասենյակի տնօրեն, 18.11.2024 թվականին դիմող՝ Հրայր Անտոնյանին ներկայացրել է **գրություն՝** *առաջարկելով փոփոխել Պայմանագրի գինը՝ ավելացնելով այն, կամ լուծել պայմանագիրը, այն հիմնավորմամբ, որ Փաստաբաններն արդեն երրորդ անգամ կատարում են Պայմանագրով ստանձնած նույն պարտավորությունը,* ինչին ի պատասխան **Դիմողները 22.11.2024 թվականի գրությամբ** *առարկել են Պայմանագրի փոփոխության և լուծման դեմ, պահանջելով ապահովել դրա կատարումը, սակայն Փաստաբանները չեն ներկայացել գործով 25.11.2024 թվականին նշանակված հերթական դատական նիստին:*

Հետագայում Փաստաբանները չեն մասնակցել թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով 25.11.2024 թվականին նշանակված հերթական դատական նիստին, ինչի կապակցությամբ Դիմողները 29.11.2024 թվականին Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանից պահանջել են պարզաբանում թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով 25.11.2024 թվականին նշանակված դատական նիստին չներկայանալու պատճառների վերաբերյալ: Նշվածին ի պատասխան Փաստաբանական գրասենյակը տրամադրել է Դատարանին հասցեագրված 03.12.2024 թվականի գրության պատճենը, որի համաձայն Փաստաբաններն այլևս չեն իրականացնում Դիմողների շահերի պաշտպանությունը, իսկ 10.12.2024 թվականի գրությամբ Դիմողներին ներկայացրել է Պայմանագրի հետագա կատարումից հրաժարվելու պատճառները:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, ինչպես նաև պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ

գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.8.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը, եթե օրենքը չի արգելում և այլ բան նախատեսված չէ պայմանագրով, իրավունք ունի հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հետևյալ հիմքերով՝*

1) վստահորդը փաստաբանի պարզաբանումներին հակառակ կատարում է գործողություններ կապված հանձնարարության հետ, որոնք օրենքով արգելված են, կամ վստահորդի հանձնարարությունները կարող են հանգեցնել փաստաբանի կողմից ՀՀ օրենսդրության կամ Կանոնագրքի խախտմանը.

2) վստահորդը պնդում է ակնկալվող արդյունքի ձեռքբերումը, որը օբյեկտիվորեն դարձել է անհնար՝ նոր ի հայտ եկած հանգամանքների կամ փաստերի բերումով,

3) վստահորդը թույլ է տալիս իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտումներ,

4) հանձնարարության պատշաճ կատարումը անհնար է դառնում վստահորդի կողմից փաստաբանի խորհուրդներին հակառակ գործողություններ կատարելու հետևանքով,

5) վստահորդը կատարում է փաստաբանի պատիվը, արժանապատվությունը և հեղինակությունը անվանարկող գործողություններ,

6) վստահորդը հրաժարվում է կատարել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով նախատեսված վճարումները:

Կանոնագրքի 3.8.3-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանի կողմից իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հրաժարվելու դեպքում փաստաբանը պարտավոր է բացատրել վստահորդին իրավական օգնություն ցույց տալու պայմանագրից հրաժարվելու պատճառները և զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնասել վստահորդի շահերին: Փաստաբանն իրավունք չունի թողնել գործը այնպիսի ձևով և այնպիսի հանգամանքներում, որի արդյունքում վստահորդը կարող է հայտնվել անելանելի դրության մեջ և ժամանակին չստանալ այլ իրավական օգնություն(...):*

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 1-ին պարբերությանն համաձայն՝ *Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝*

1) վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ...:

Վկայակոչված կանոնների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վստահորդի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունից բացի վստահորդի փաստաբանի համար սահմանվում են նաև այլ պարտականություններ, որոնք ենթակա են կատարման ինչպես հանձնարարության կատարման ընթացքում, այնպես էլ դրա ավարտին՝ մասնավորապես, պայմանագիրը լուծելուց հետո վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը, ինչպես նաև պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի չի կատարվել աշխատանք:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում պետք է ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի համար: Ավելին, կնքված պայմանագրի որոշակի առարկայի շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար, իսկ եթե պայմանագիրը լուծելիս որոշակի գործողություններ փաստացի չեն կատարվել՝ ապա փաստաբանը պարտավոր է միջոցներ ձեռնարկի հոնորարի մի մասը վերադարձնելու ուղղությամբ:

Բացի այդ, իր հերթին Կանոնագրքի որոշ իրավակարգավորումներով ուղղակիորեն պայմանավորված է այն հանգամանքը, որ փաստաբանն իրավասու չէ ցանկացած իրավիճակում և առանց որևէ պատճառաբանության հրաժարվելու իր կողմից վստահորդի առջև ստանձնած պարտավորությունների կատարումից, որպիսի իրավիճակում կարող են վտանգվել վստահորդի շահերը, իսկ վստահորդը ժամանակին այլ իրավական օգնություն չստանալու պարագայում կարող է հայտնվել խոցելի և անելանելի դրության մեջ:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

7.1 Փաստաբան Լևոն Սոխակի Բաղդասարյանի մասով.

- **Փաստաբան Լևոն Բաղդասարյանին վերագրվող Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման մասով Հանձնաժողովն արձանագրում է, որ՝**

11.04.2022 թվականին կնքված թիվ 2223/ԼԳ Պայմանագրով Փաստաբանական գրասենյակը՝ որպես կատարող, ստանձնել է Դիմողների շահերի պաշտպանությունը թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով, պարտավորվելով տրամադրել խորհրդատվություն և իրականացնել դատական պաշտպանություն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում: Ըստ այդմ, Փաստաբանական գրասենյակի փաստաբաններ Լևոն Բաղդասարյանի և Թադևոս Ալեքսանյանի իրենց տրված հանձնարարությանը հետամուտ են եղել, այդ թվում նշված գործով երրորդ անգամ դատավորի փոփոխությունից՝ 18.04.2024 թվականից հետո, իրենց պարտականությունների կատարմանը՝ մասնակցելով 27.05.2024, 28.06.2024, 13.09.2024 թվականներին նշանակված դատական նիստերին:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ Դիմողների դժգոհությունը Փաստաբանների կողմից բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու մասով առավելապես վերաբերում էր առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով միայն 25.11.2024 թվականին նշանակված հերթական դատական նիստին Փաստաբանների չներկայանալուն և չմասնակցելուն, այն դեպքում, երբ Պայմանագրի առարկան փաստացի

սահմանափակված է եղել հենց առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում գործի քննությամբ:

Այսինքն, եթե նույնիսկ մի պահ ենթադրենք, որ դատավորների փոփոխության պայմաններում գործի քննությունը սկսվել է նորից, ինչի պատճառով Փաստաբանները ստիպված են եղել յուրաքանչյուր անգամ մատուցել նույն ծառայությունները, այնուամենայնիվ դրանք մատուցվելու էին Պայմանագրով հստակ որոշված առարկային համապատասխան և դրա սահմաններում: Նման իրավիճակը ողջամտորեն կարող էր հաղթահարվել այն դեպքում, երբ Պայմանագրով ուղղակիորեն ի սկզբանե կարգավորված լիներ գործի ծավալի նման փոփոխության հնարավորությունը:

Քննարկման առարկա իրավիճակում, Փաստաբանները թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով երրորդ անգամ դատավորի փոփոխությունից հետո փաստացի մասնակցել են նշանակված 3 դատական նիստերին, սակայն 25.11.2024 թվականի նշանակված դատական նիստից 6 օր առաջ՝ 18.11.2024 թվականին Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանը տեղեկացրել է Դիմողներին Պայմանագրով սահմանված գնի ավելացման կամ Պայմանագրի լուծման մասին, ինչի կապակցությամբ Դիմողները հայտնել են իրենց առարկությունը 22.11.2024 թվականի գրությամբ:

Ստացվում է, որ Դիմողները ունեցել էին ողջամիտ ակնկալիք առ այն, որ Փաստաբանական գրասենյակն առնվազն կապահովի իր պարտականությունների կատարումը և Փաստաբանները կներկայանան մոտակա՝ 25.11.2024 թվականին նշանակված դատական նիստին, ինչը սակայն տեղի չի ունեցել:

Այս համատեքստում, անդրադառնալով Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանի դիտարկմանն առ այն, որ Դիմողներին նույն ծառայությունը մատուցվում էր արդեն 3 անգամ, Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ գործով երրորդ անգամ դատավորի փոփոխությունից հետո Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանը արդեն իսկ հետամուտ էր եղել տրված հանձնարարության շարունակական կատարմանը և պետք է ապահովեր մասնակցությունը նաև 25.11.2024 թվականին նշանակված դատական նիստին, առավել ևս այն դեպքում, երբ Դիմողները չէին տվել իրենց համաձայնությունը ոչ գնի ավելացման, ոչ էլ Պայմանագրի լուծման համար, որն իր հերթին փաստացի լուծվել էր 03.12.2024 թվականին, երբ Փաստաբանները հայտնել են Դատարանին Դիմողների շահերի պաշտպանության դադարեցման մասին:

Նման պայմաններում, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողների ու Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ փաստաբան Լևոն Բաղդասարյանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետի պահանջների խախտման հատկանիշները**:

- **Փաստաբան Լևոն Բաղդասարյանին վերագրվող Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.2, 3.8.3 և 3.8.4 (1) ենթակետերի պահանջների խախտման մասով Հանձնաժողովն արձանագրում է, որ՝**

թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով երրորդ անգամ դատավորի փոփոխությունից հետո 25.11.2024 թվականի նշանակված դատական նիստից 6 օր առաջ՝ 18.11.2024 թվականին Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանը տեղեկացրել է Դիմողներին Պայմանագրով սահմանված գնի ավելացման կամ Պայմանագրի լուծման մասին, ինչի կապակցությամբ Դիմողները հայտնել են իրենց առարկությունը 22.11.2024 թվականի գրությամբ:

Հետագայում, թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով 25.11.2024 թվականին նշանակված դատական նիստին Փաստաբանների չներկայանալու պատճառները պարզելու կապակցությամբ Դիմողները 29.11.2024 թվականին Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանին ներկայացրել են գրություն: Նշվածին ի պատասխան Փաստաբանական գրասենյակը տրամադրել է Դատարանին հասցեագրված 03.12.2024 թվականի գրության պատճենը, որի համաձայն Փաստաբաններն այլևս չեն իրականացնում Դիմողների շահերի պաշտպանությունը, իսկ 10.12.2024 թվականի գրությամբ Դիմողներին ներկայացրել է Պայմանագրի հետագա կատարումից հրաժարվելու պատճառները՝ առավելապես հղում կատարելով ծառայությունները 3 անգամ մատուցելու և հարկային բեռի ավելացման պատճառներին:

Հանձնաժողովը, նախքան իրավական օգնություն ցույց տալու Պայմանագրի կատարումից Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանի հրաժարվելու վերաբերյալ հիմքերի առկայության հարցին անդրադառնալը, հարկ է համարում արձանագրել, որ Պայմանագրով սահմանված գնի ավելացման կամ դրա լուծման վերաբերյալ Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանը փաստացի տեղեկացրել է Դիմողներին գործով նշանակված մոտակա դատական նիստից ընդամենը 6 օր առաջ՝ 18.11.2024 թվականին, որպիսի պայմաններում ստեղծվել է այնպիսի իրավիճակ, երբ Պայմանագրի փոփոխության կամ լուծման վերաբերյալ բանակցությունների ընթացքը համընկել է Փաստաբանների կողմից իրանց տրված հանձնարարության շրջանակներում որոշակի գործողության կատարման հետ, այն՝ դատական նիստին մասնակցելը:

Այս առումով, Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ անկախ նրանից թե ինչ փուլում էին Պայմանագրի կողմերի բանակցությունները, Դիմողների շահերի պաշտպանությունը ստանձնելիս և այն իրականացնելիս չպետք է ստեղծվեր այնպիսի իրավիճակ, որ Դիմողները հայտնվեին անելանելի դրության մեջ և ժամանակին չստանային իրավական օգնություն: Այլ կերպ ասած, նույնիսկ եթե Դիմողները համաձայնվեին Պայմանագրի լուծմանը, ապա, նախքան անհրաժեշտ գործընթացի մեկնարկը, Փաստաբանները պարտավոր էին առնվազն ապահովել իրենց մասնակցությունը մոտակա նիստին, ինչը չեն իրականացրել:

Հաջորդիվ, անդրադառնալով Պայմանագրի լուծման պատճառների մասին տեղեկացնելուն, Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանը Պայմանագրի լուծման պատճառների

մասին փաստացի տեղեկացրել է Դիմողներին՝ 10.12.2024 թվականին, ծառայությունների մատուցումից փաստացի հրաժարվելուց (25.11.2024 թվականը՝ դատական նիստին չներկայանալը) և Պայմանագիրը լուծելուց հետո (03.12.2024 թվականին՝ Դատարան ներկայացված գրությունը Դիմողների շահերի պաշտպանությունը դադարեցնելու մասին գրություն ներկայացնելը), մինչդեռ նշված պատճառները պետք է Դիմողներին ներկայացված լինեին դեռևս այն պահին, երբ Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանը առնվազն պատրաստվում էր հետամուտ լինել Պայմանագրի լուծմանը:

Հաջորդիվ, անդրադառնալով իրավական օգնություն ցույց տալու Պայմանագրի կատարումից հրաժարվելու հիմքերին, Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ դրանք սպառիչ նախատեսված են Կանոնագրքի շրջանակներում: Ըստ այդմ, Հանձնաժողովը հիմնավոր չի համարում Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանի պնդումն առ այն, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ և 788-րդ հոդվածների հաշվառմամբ, Փաստաբանական գրասենյակը իրավունք է ունեցել լուծել Պայմանագիրը:

Հանձնաժողովը նախ փաստում է, որ Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանի կողմից Դիմողներին հասցեագրված գրությունների բովանդակությունից չի հետևում, որ Պայմանագիրը լուծելիս Փաստաբանական գրասենյակը առաջնորդվում էր ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ և 788-րդ հոդվածներով: Այլ կերպ ասած, անկախ նրանից վերաբերելի էին նշված կարգավորումները Պայմանագրի լուծման նկատմամբ, թե ոչ, Պայմանագրի կողմ Փաստաբանական գրասենյակը ողջամտորեն պետք է գոնե անդրադարձ կատարեր դրանց, որպիսի պայմաններում, արդեն քննարկման առարկա էր դառնալու բացառապես դրանց կիրառելիության հարցը փաստաբան-վստահորդ առանձնահատուկ հարաբերություններում:

Ընդ որում, Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանի գրությունների բովանդակությունից հետևում է, որ Պայմանագրի լուծումը ուղղակիորեն վերաբերում է նախապես ամբողջությամբ Դիմողների կողմից վճարված Պայմանագրի գնի ավելացման հետ, ինչը Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանը հիմնավորում էր նույն ծառայությունը 3 անգամ մատուցված լինելու հանգամանքով:

Ստացվում է, որ Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանի Պայմանագիրը լուծել է, ոչ թե հիմք ընդունելով ինչ-որ վերացական կարգավորումներ, այլ հստակ պատճառներ, որոնք էլ քննարկվելու են Կանոնագրքով ամրագրված իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հրաժարվելու սպառիչ հիմքերին համապատասխանության տեսանկյունից:

Մասնավորապես, **Կանոնագրքի 3.8.2-րդ ենթակետը սահմանում է, որ** *փաստաբանը, եթե օրենքը չի արգելում և այլ բան նախատեսված չէ պայմանագրով, իրավունք ունի հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հետևյալ հիմքերով՝*

1) վստահորդը փաստաբանի պարզաբանումներին հակառակ կատարում է

գործողություններ կապված հանձնարության հետ, որոնք օրենքով արգելված են, կամ վստահորդի հանձնարարությունները կարող են հանգեցնել փաստաբանի կողմից ՀՀ օրենսդրության կամ Կանոնագրքի խախտմանը.

2) վստահորդը պնդում է ակնկալվող արդյունքի ձեռքբերումը, որը օբյեկտիվորեն դարձել է անհնար՝ նոր ի հայտ եկած հանգամանքների կամ փաստերի բերումով,

3) վստահորդը թույլ է տալիս իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտումներ,

4) հանձնարարության պատշաճ կատարումը անհնար է դառնում վստահորդի կողմից փաստաբանի խորհուրդներին հակառակ գործողություններ կատարելու հետևանքով,

5) վստահորդը կատարում է փաստաբանի պատիվը, արժանապատվությունը և հեղինակությունը անվանարկող գործողություններ,

6) վստահորդը հրաժարվում է կատարել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով նախատեսված վճարումները:

Հանձնաժողովը փաստում է, որ Դիմողներին հասցեագրված Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանի գրություններում մեջբերված պատճառը, այն՝ նույն ծառայությունները 3 անգամ մատուցելու պատճառով Պայմանագրի գնի ավելացում, փաստացի սահմանված չէ Կանոնագրքի 3.8.2-րդ ենթակետի շրջանակներում, ինչից ակնհայտ է դառնում, որ առնվազն այդ հիմքով Պայմանագիրը միակողմանի Փաստաբանական գրասենյակի կողմից լուծվել չէր կարող:

Այնուամենայնիվ, Պայմանագրի լուծման պայմաններում, քննարկման առարկա է դառնում նաև Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանի կողմից հոնորարի մի մասի, որի դիմաց փաստացի աշխատանքի չի կատարվել, Դիմողներին վերադարձնելու հարցը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Պայմանագրի առարկան սահմանափակված է եղել թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով Դիմողների շահերի պաշտպանությամբ միայն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, անկախ գործի փաստացի տևողությունից, ուստի, հաշվի առնելով, որ գործի քննությունը դատարանում Պայմանագրի լուծման պահին առնվազն ավարտված չէր, իսկ Փաստաբանները ըստ էության գործով երրորդ անգամ դատավորի փոփոխությունից հետո հետամուտ էին եղել Դիմողների շահերի պաշտպանությանը և մասնակցել էին 3 դատական նիստերին, Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանը նաև պարտավոր էր վերադարձնել հոնորարի մի մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել:

Նման պայմաններում, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյան կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ փաստաբան Լևոն Բաղդասարյան վարքագծում **առկա են Կանոնագրքի 3.8.2, 3.8.3 և 3.8.4 (1) ենթակետի պահանջների խախտման հատկանիշները**:

7.2 Փաստաբան Թադևոս Վարդգեսի Ալեքսանյանի մասով.

• **Փաստաբան Թադևոս Ալեքսանյանին Օրենքի 19-րդ հոդվածի սի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.8.3 ենթակետերի պահանջների խախտման մասով Հանձնաժողովն արձանագրում է, որ**

սույն որոշմամբ արդեն իսկ անդրադարձ է կատարվել գործով հաստատված փաստերին՝ Պայմանագրի առարկայի, Փաստաբանների կողմից Դիմողների շահերի պաշտպանությունը ստանձնելու, թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով 25.11.2024 թվականին նշանակված դատական նիստին չներկայանալու, ինչպես նաև գործը այնպիսի ձևով և այնպիսի հանգամանքներում թողնելու փաստը, որի արդյունքում Դիմողները հայտնվել են անելանելի դրության մեջ և ժամանակին չեն ստացել այլ իրավական օգնություն:

Հանձնաժողովը փաստում է, որ չնայած փաստաբան Թադևոս Ալեքսանյանը ևս ներկայացնում էր Դիմողների շահերը թիվ ԵԴ/0872/01/20 քրեական գործով, այնուամենայնիվ, վերջինս նաև հանդիսանում է Փաստաբանական գրասենյակի աշխատակից-փաստաբանը, որպիսի պայմաններում ուղղակիորեն Դիմողներից չէր ստացել հանձնարարություն և վերջիններիս շահերի պաշտպանությանն ուղղված գործողություններն իրականացնում էր ելնելով Փաստաբանական գրասենյակի տնօրենի կողմից տրված աշխատանքային հանձնարարությունների հիման վրա: Այլ կերպ ասած, իրավական օգնություն ցույց տալու մասին Պայմանագիրը Փաստաբանական գրասենյակի հետ կնքված լինելու պայմաններում Փաստաբանական գրասենյակի աշխատակից-փաստաբան Թադևոս Ալեքսանյանը չէր կարող ինքնուրույն որոշումներ կայացնել Դիմողների վերաբերյալ գործով, ինչն չի իր հերթին վկայում է փաստաբան Թադևոս Ալեքսանյանի մեղքի բացակայության մասին:

Նշվածը հաշվի առնելով, ինչպես նաև գործում առկա ապացույցները իրենց համակցությամբ, Հանձնաժողովն արձանագրում է, որ փաստաբան Թադևոս Ալեքսանյանին վերագրվող Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.8.3 ենթակետերի պահանջի խախտման մասով բացակայում են դրա հատկանիշները, որպիսի պայմաններում էլ այս մասով հիմնավորված չէ Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը</u>.

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ*

կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.10 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Համաչափության սկզբունքը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի

համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Մեղքի աստիճանը

Տվյալ պարագայում, Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ գործի նյութերով հաստատված է համարվում Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանը ոչ միայն բարեխիղճ իրավական օգնություն ցույց չի տվել Դիմողներին՝ չներկայանալով հերթական դատական նիստին, այլ նաև դրա մասին տեղյակ լինելով հանդերձ, դրանից 6 օր առաջ ձեռնարկում է Պայմանագի փոփոխության կամ լուծման վերաբերյալ գործընթաց և փաստացի Պայմանագրի լուծված չլինելու պայմաններում, չի ապահովում ներկայությունը համապատասխան դատական նիստին, թողնելով գործը այնպիսի այնպիսի ձևով և այնպիսի հանգամանքներում, որի արդյունքում Դիմողները հայտնվել են անելանելի դրության մեջ և ժամանակին չեն ստացել իրավական օգնություն:

Ավելին, նման իրավիճակում Փաստաբանական գրասենյակը Պայմանագիրը փաստացի լուծել է գործը ձգձգվելու և դրա այդ պայմաններում Պայմանագրի գինը Դիմողների կողմից չավելացնելու պատճառներով, որպիսի իրավական հնարավորությունը Պայմանագրի լուծման համար բացակայել է, իսկ Պայմանագրի կատարումից փաստացի հրաժարվելու պարագայում, ծառայություններն ամբողջ ծավալով մատուցված չլինելու դեպքում, նաև չի վերադարձրել վճարված հոնորարի մի մասը:

Կարգապահական խախտման հետևանքները

Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանը իրեն մեղսագրվող արարքը կատարելով գործել է ի վնաս իր վստահորդներ՝ Դիմողների, ում շահերը պաշտպանությունը ստանձնել և պարտավորվել էր իրականացնել կնքված Պայմանագրով սահմանված հստակ առարկայի սահմաններում, իսկ ծառայությունների կատարումից փաստացի հրաժարվելու արդյունքում Դիմողները զրկվել են դատական նիստին ներկայացուցիչ փաստաբանի միջոցով իրենց իրավունքները ու շահերը ներկայացնելու ու պաշտպանելու հնարավորությունից:

Փաստաբանի անձը, կարգապահական վարույթները, առկա տույժերը

Հանձնաժողովը հաշվի է առնում՝ Փաստաբանական գրասենյակի տնօրեն-փաստաբան Լևոն Բաղդասարյանի անձը բնութագրող հանգամանքները՝ այդ թվում նաև կարգապահական տույժերի բացակայությունը, ինչից ելնելով նրա նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ կիրառում է «նկատողություն»:

Միաժամանակ, հետագայում նմանատիպ իրավիճակները խմբագրելու նպատակով, ինչպես նաև նկատի ունենալով, որ խախտումն իր բնույթով հիմնականում

վարքագծային-էթիկական բնույթ ունի՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Փաստաբանի նկատմամբ որպես լրացուցիչ տույժ կիրառել «վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա»» թեմայով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.1-ին հոդվածի 5-րդ մասը, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Լևոն Սոխակի Բաղդասարյանի (արտոնագիր՝ թիվ 88) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.8.2, 3.8.3 և 3.8.4 (1) ենթակետերի խախտման համար:

2. Փաստաբան Թադևոս Վարդգեսի Ալեքսանյանի (արտոնագիր՝ թիվ 87) նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 և 3.8.3 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-25055 կարգապահական վարույթը կարճել:

3. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25055-3-Ա
07 մայիսի 2025թ.
ք.Երևան